


**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մարզկենտրոնը՝ ք.Արմավիր



*Տարածաշրջանները՝*

Արմավիր,  
Էջմիածին,  
Բաղրամյան

*Քաղաքները՝*

Վաղարշապատ,  
Արմավիր,  
Մեծամոր

**ՀՀ Արմավիրի մարզը** գտնվում է հանրապետության արևմտյան հատվածում:

Մարզը սահմանակից է.

- հյուսիսից՝ ՀՀ Արագածոտնի մարզին,
- արևելքից՝ մայրաքաղաքին,
- հարավ-արևելքից՝ ՀՀ Արարատի մարզին և
- արևմուտքից՝ պետական սահմանով, Թուրքիային:

Տարածքը	1242 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	4.2 %
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	94
Քաղաքներ	3
Գյուղեր	95
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ	284.1 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	101.7 հազ.մարդ
գյուղական	182.4 հազ.մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009թ.	8.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.8 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	97045 հա
<i>այդ թվում՝ վարելահողեր</i>	39399 հա

Վարչատարածքային բաժանումը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ

	Տարածքը, քառ. կմ	Մայրաքաղաքը/մարզկենտրոնը	Բնակչության խտությունը, մարդ/կմ <sup>2</sup>	Համայնքներ			Մարզկենտրոնի հեռավորությունը Երևանից, կմ
				քաղաքային	վարչական շրջաններ	գյուղական	
Հայաստանի Հանրապետություն	29743	Երևան	109	48	12	866	-
ՀՀ Արմավիրի մարզ	1242	Արմավիր	229	3	-	94	44

ՀՀ Արմավիրի մարզի քաղաքները

(հունվարի 1-ի դրությամբ)

Քաղաքի անվանումը	Քաղաքի կարգավիճակ ստանալու տարեթիվը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ	Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ				
			2006	2007	2008	2009	2010
Արմավիր	1947	44	32.3	32.5	33.7	33.6	33.8
Մեծամոր	1995	38	10.2	10.2	10.3	10.3	10.4
Վաղարշապատ	1924	20	56.7	56.9	57.2	57.3	57.5

## ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

**ՀՀ Արմավիրի մարզը** զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքի 4.2%-ը: Մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող ավտոխճուղիներ՝ Երևան–Արմավիր, Երևան–Քարակերտ և Երևան–Գյումրի, ինչպես նաև Երևան–Թբիլիսի երկաթուղին:

**ՀՀ Արմավիրի մարզը** հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

**Անասնաբուծության** բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բոստանաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկաբնույթի և բանջարաբոստանային մշակաբույսեր:

**Արդյունաբերությունը** մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ալկոհոլային խմիչքի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

**Բեռնաուղևորափոխադրումները** մարզում իրականացվում են ավտոմոբիլային սրանսպորտով:

2009թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 5.1 %,
- գյուղատնտեսություն՝ 19.6 %,
- շինարարություն՝ 1.8 %,
- մանրածախ առևտուր՝ 3.3 %,
- ծառայություններ՝ 1.4%:

Մարզը հարուստ է պատմամշակութային արժեքներով՝ Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Հայաստանի Ազգագրական պետական թանգարանը Սարդարապատում, Զվարթնոց տաճարը, Հայաստանի ստորերկրյա ջրերի ամենամեծ ելքը՝ Այդր լիճը, հին հեթանոսական կենտրոն Բագարանը, «Մուսալեռ», «Սարդարապատ» հուշահամալիրները, Մբ. Էջմիածնի Մայր Տաճարն իր Գանձատնով:

Պատմական Հայաստանի մայրաքաղաքներ Արմավիրի ու Երվանդաշատի փլատակներն առնված են ՀՀ պատմական միջավայրի պահպանության գոտիների մեջ:

**ՀՀ Արմավիրի մարզը** հանրապետությունում առանձնանում է իր զարգացած գյուղատնտեսությամբ և արդյունաբերությամբ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են, ինչպես բուսաբուծության (բազմամյա տնկարկներ, բանջարեղեն), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար: Անասնապահության բնագավառում հիմնականում զարգացած է խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը, խոզաբուծությունը և թռչնաբուծությունը, իսկ հողագործության մեջ՝ պտղաբուծությունն ու բուսաբուծությունը: Հիմնականում մշակվում են հացահատիկաբնույթի մշակաբույսեր: Արդյունաբերությունը մասնագիտացած է էլեկտրաէներգիայի, սննդամթերքի, ըմպելիքի, ակոհոլային խմիչքի արտադրության ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

**Նախկին Արմավիր մայրաքաղաքի** միջնաբերդը, ըստ պեղումների, գտնվել է մոտ 80 մ բարձրությամբ բլրի գագաթին: Քաղաքի կենտրոնում եղել է Հայկ Աղեղնավորի հրապարակը, որտեղ Հայոց արքա Երվանդ Սակավակյացն իր ձեռքով թագադրել է իր որդի Տիգրանին:

Կյանքը քաղաքում մ.թ. I դարում աստիճանաբար սկսում է մարել և արդեն IV դարում այն նմանվում է լքված ամրոցի: Արմավիր քաղաքն ամբողջությամբ ավերվել է մոնղոլների արշավանքի ժամանակ: Նախկին մայրաքաղաք Արմավիրի տարածքում ներկայումս գտնվում են մարզի Նոր-Արմավիր, Ջանֆիդա, Հայկավան, Ջրաշեն, Նոր Արտագերս, Նալբանդյան և Արմավիր գյուղերը: Միջնաբերդի ավերակները, որպես ուխտատեղի, պահպանվում են մինչ օրս:

## **Արմավիր քաղաք**

Արմավիր քաղաքը (խորհրդային տարիներին՝ Հոկտեմբերյան, 2009թ. տարեվերջին՝ 33.8 հազ. բնակիչ) կրում է Հայոց առաջին մայրաքաղաքի անունը:

Այն հիմնադրվել է 1931թ. հունիսի 26-ին և գտնվում է Երևան քաղաքից 44 կմ դեպի հյուսիս-արևմուտք:

Արգիշտիխինիլի բերդը, որի շրջակայքում հետագայում կառուցվել է Արմավիր քաղաքը, հիմնադրվել է Արգիշտի I-ի կողմից՝ մ.թ.ա. 776թ. (Էրեբունու հիմնադրումից 6 տարի անց): Գտնվել է արգավանդ և բարեբեր Արարատյան դաշտում, միջազգային քարավանային առևտրական ուղիների խաչմերուկում: Ժամանակի ընթացքում քաղաքը դառնում է Ուրարտական պետության վարչատնտեսական կարևոր բերդաքաղաքներից մեկը, մրցակցելով Վան մայրաքաղաքի հետ:

## **Մեծամոր քաղաք**

**Մեծամոր քաղաքի** տարածքը բնակեցված է եղել մ.թ.ա. V հազարամյակից մինչև մ.թ. XVIII դարը: 1965թ.-ին սկսվել են Մեծամոր ամրոցի դամբարանադաշտի պեղումները: Արքունի քաղաքը նշանավոր էր իր աստղադիտարանով, 7 սրբարաններից կազմված տաճարական համալիրով:

**Մեծամոր քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 10.4 հազ. բնակիչ, Երևանից 38 կմ հեռավորությամբ) նշանավոր է ՀՀ ատոմակայանով, որը զբաղեցնում է 300 հա տարածք, իր մեծությամբ և հզորությամբ միակն է Հարավային Կովկասում:

## **Վաղարշապատ քաղաք**

**Վաղարշապատ քաղաքի** տարածքում մարդիկ բնակվել են հնագույն ժամանակներից՝ վկաները էջմիածնի և մոտակայքի հուշարձաններն են, քարե, բրոնզե և երկաթե դարերի հնագիտական անընդմեջ շերտերով: Վաղարշապատի մասին ամենահին տեղեկությունը պատկանում է Ուրարտական թագավոր Ռուսա Բ-ին (մ.թ.ա. 685-645թթ.):

Ըստ պահպանված սեպագրերի, Վաղարշապատի տարածքը կոչվել է Կուարլինի: Մեկ դար հետո, Հայոց Երվանդ Սակավակյաց թագավորի օրոք, վերջինիս փեսա Վարդգես Մանուկն այդ նույն տարածքում՝ Շրեշ բլրի և Արտիմեդ քաղաքի մոտ Քասախ գետի ափամերձ տարածքում կառուցել է խոշոր ավան և իր անունով կոչել Վարդգեսավան:

Վաղարշ Ա. Արշակունի արքան Վարդգեսավանը պարսպապատել ու վերանվանել է Վաղարշապատ և դարձրել մայրաքաղաք: Մինչև Հայ Արշակունյաց թագավորության անկումը՝ 428թ., Վաղարշապատը կատարել է մայրաքաղաքին փոխարինող պթոռանիստի դեր և որի դերը հատկապես արժեվորվել է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո:

**Վաղարշապատ քաղաքը** (2009թ. տարեվերջին՝ 57.5 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 20 կմ հեռավորության վրա: Մեծությամբ և նշանակությամբ մարզում այն առաջին քաղաքն է:

Մարզկենտրոնից 36 կմ դեպի արևմուտք՝ Երասխ և Ախուրյան գետերի միախառնման տեղում, գտնվում է Հայաստանի հնագույն մայրաքաղաքներից մեկի՝ Երվանդաշատի, Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաքի ավերակները: Հին Հայաստանի այս մայրաքաղաքը կործանվել է 360թ.-ին:

Առ այսօր պահպանվում են Երվանդաշատի պարիսպների հետքերը, երկու եկեղեցիների ավերակները և վիմագիր արձանագրությունները: Քաղաքի տեղում այժմ գտնվում է Երվանդաշատ գյուղը:

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը*, մարդ	
		2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
Արմավիր	ք. Արմավիր	33628	33758
Մեծամոր	ք. Մեծամոր	10287	10411
Վաղարշապատ	ք. Վաղարշապատ	57252	57465

**ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ**

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը**, մարդ	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
1	Ալաշկերտ		1815	1897
2	Ակնալիճ		3310	3160
3	Ակնաշեն		1670	1690
4	Աղավնատուն		3481	3485
5	Ամասիա		1205	1162
6	Ամբերդ		1813	1805
7	Այգեկ		1634	1668
8	Այգեշատ (Արմավիրի տարածաշրջան)		2064	2069
9	Այգեշատ (Էջմիածնի տարածաշրջան)		1846	1859
10	Ապագա		1928	1935
11	Այգեվան		1638	1642
12	Առատաշեն		3010	3019
13	Արագած		3239	3269
14	Արագավի		1833	1844

\* ՀՀ Արմավիրի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

\*\* ՀՀ Արմավիրի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2010թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.4%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **, մարդ	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
15	Արաքս (Արմավիրի տարածաշրջան)		1820	1875
16	Արաքս (Էջմիածնի տարածաշրջան)		1827	1864
17	Արգավանդ		2471	2498
18	Արգինա		538	540
19	Արմավիր		3570	3567
20	Արշալույս		4117	4251
21	Արտամետ		217	180
22	Արտաշար		1444	1354
23	Արտիմետ		2126	2146
24	Արևադաշտ		351	370
25	Արևաշատ		2079	2094
26	Արևիկ		2748	2768
27	Բագարան		555	648
28	Բաղրամյան (Բաղրամյանի տարածաշրջան)		1116	1118
29	Բաղրամյան (Էջմիածնի տարածաշրջան)		3078	3068
30	Բամբակաշատ		3466	3201
31	Բերքաշատ		395	553
32	Գայ		3507	3484
33	Գեղակերտ		3170	3186
34	Գետաշեն		2469	2589
35	Գրիբոյեդով		1991	2012
36	Դալարիկ		4163	4175
37	Դաշտ		993	992
38	Դողս		1494	1502
39	Եղեգնուտ		2073	2122
40	Երասխահուն		2123	2127
41	Երվանդաշատ		791 <sup>♠</sup>	809
42	Զարթոնք		2252	2443
43	Լենուղի		1769	1676
44	Լեռնագոգ		2189	2220
45	Լեռնամերձ		474	478
46	Լուկաշին		2746	2521
47	Լուսազյուղ		1193	1181
48	Խանջյան		2108	2114

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **, մարդ	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
49	Խորոնք		2834	2889
50	Ծաղկալանջ		1586	1607
51	Ծաղկունք		1338	1373
52	Ծիածան		1300	1307
53	Կողբական		115	101
54	Հայթաղ		3096	3141
55	Հայկաշեն		1453	1458
56	Հայկավան		1348	1399
57	Հացիկ		2804	2900
58	Հովտամեջ		1396	1401
59	Հուշակերտ		1046	1031
60	Մայիսյան		2004	1996
61	Մարգարա		1482	1485
62	Մեծամոր		1410	1403
63	Մերձավան		3387	3390
64	Մյասնիկյան		4523	4510
65	Մրգաշատ		6339 <sup>♠</sup>	6393
66	Մրգաստան		1570	1608
67	Մուսալեռ		2741	2703
68	Նալբանդյան		5465	5324
69	Նոր Արմավիր		2136	2145
70	Նոր Արտագես		1863	1865
71	Նորակերտ		3228	3237
72	Նորապատ		2539	2538
73	Նորավան		1182	1334
74	Նոր Կեսարիա		1506	1542
75	Շահումյան		1567	1719
76	Շահումյանի թոչնաֆաբրիկա		1220	1222
77	Շենավան		1812	1814
78	Շենիկ		1052	1067
79	Ոսկեհատ		3428	3431
80	Պտղունք		1876	1895
81	Զանֆիդա		3331	3337
82	Զրաշեն		856	855
83	Զրառատ		3090	3170
84	Զրարբի		1686	1702
85	Սարդարապատ		6275	6300
86	Վանանդ		1070	1004
87	Վարդանաշեն		1220	857



	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը **, մարդ	
			2009թ. հունվարի 1-ի դրությամբ	2010թ. հունվարի 1-ի դրությամբ
88	Տավորիկ		196	192
89	Տանձուտ		2022	2025
90	Տարոնիկ		2141	2162
91	Փարաքար	• Փարաքար • Թախրով	8681	9297
92	Փշատավան		2827	2870
93	Քարակերտ		4319	4538
94	Ֆերիկ		312	408

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.**

	Ընդամենը	նրանցից`	
		կանայք <sup>1</sup>	տղամարդիկ <sup>1</sup>
Բնակչությունը, մարդ	10000	5069	4931
Ծնվածներ, մարդ	140	63	77
Մահացածներ, մարդ	77	37	40
Ամուսնություններ	62	X	X
Ամուսնալուծություններ	5	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	37.5	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ`			
նախադպրոցական	132	64	68
հանրակրթական	1314	621	693
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	56	40	16
նախնական մասնագիտական (արհեստագործական)	4	-	4
միջին մասնագիտական	65	39	26
բարձրագույն մասնագիտական	23	11	12
Առողջապահության ոլորտ`			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	28948	...	...
Մարզիկներ, մարդ	54	5	49
Զբաղվածներ, մարդ	4175	...	...
նրանցից` գիտական հիմնարկներում	4	2	2
նրանցից` գիտության դոկտոր	0.0	0.0	0.0
գիտության թեկնածուներ	2	1	1
ուսուցիչներ	132	112	20
բժիշկներ	14	...	...
միջին բուժանձնակազմ	40	...	...
Գործազուրկներ /պաշտոնապաշտ գրանցված/, մարդ	125	86	39
Սոցիալական ապահովության ոլորտ			

<sup>1</sup> Ցուցանիշները հաշվարկային են:

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք՝	տղամարդիկ՝
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1373	...	...
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	212	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	27339	...	...
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	806	...	...
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	32	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	12	X	X
միջին ծանրության	12	X	X
ծանր	9	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X